

Քաղաքացիական շարժման 20-օրեայ ցույցերէն ետք՝ Նիկոլ Փաշինեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուեցաւ



Իրաւունքի ուժով գումարուած ՀՀ Ազգային ժողովի Մայիս 8-ի յատուկ նիստին ընթացքին վարչապետի միակ թեկնածու Նիկոլ Փաշինեանը ընտրուեցաւ: Ան ՀՀ 16-րդ վարչապետն է:

Յիշեցնենք, որ Նիկոլ Փաշինեանը, որպէս վարչապետի թեկնածու, առաջադրուել էր պատգամաւորներու 1/3-ին կողմէ: Հաւաքուած էր 41 պատգամաւորի ստորագրութիւն՝ անհրաժեշտ 35-ի փոխարէն: Ստորագրեր էին ԱԺ ՀՅԴ, «Ելք», «Ծառուկեան» խմբակցութիւնները: Փաշինեան ընտրուեցաւ ձայներու 59 կողմ, 42 դէմ յարաբերակցութեամբ: Նշենք, որ ՀՀ Կ-էն անոր օգտին քուէարկեցին 11 պատգամաւորներ:

Նշենք նաեւ, որ Հայաստանի Ազգային ժողովի Մայիս 1-ին սկիզբ առած վարչապետի ընտրութեան յատուկ նիստի աւարտին, Նիկոլ Փաշինեանի վարչապետի թեկնածութեան կողմ քուէարկեց 45 պատգամաւոր, դէմ՝ 55 պատգամաւոր: Այսպիսով ՀՀ վարչապետի միակ թեկնածու Նիկոլ Փաշինեանը չընտրուեցաւ ՀՀ վարչապետ: Կարդալ էջ 5:



Լիբանանեան Խորհրդարանական Ընտրութիւններուն ՀՅԴի Առաջադրած Զորս Թեկնածուներէն Երեքը Ընտրուեցան

Մանրամասնութիւնները կարդալ էջ 5:





2018 PILOT

MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416•755•5084), www.arzfinefoods.com

Մալիս մէկը Հայաստանի մէջ.

Անցեալ տարուան ընթացքին համաշխարհային մասշտապով ստեղծուած հարստութեան 82 տոկոսին տէր դարձած է աշխարհի ամենահարուստ բնակչու–թեան մէկ տոկոսը, մինչ մարդկութեան ամենաաղքատ հատուածի 50 տոկոսին եկամուտը գէրօ յաւելում ար–ձանագրած է։ Աշխարհի ամենահարուստ 61 անձերու ունեցած հարստութիւնը համահաւասար է մարդկու–թեան այս ամենաաղքատ հատուածի կէսի ունեցած ամ–բողջ հարստութեան։ Երկու հարիւր պիլիոն տոյար կը հաշուուի այն գումարը, գոր աշխարհի ամենահարուստ մէկ տոկոսը խուսափած է վճարել, որպէս հարկային պատասխանատուութիւն, եւ յաճախ փողը փախցուցած է դէպի «հարկային դրախտներ»ու դրամատուներ։

Անգլիական Օքսֆամ (Oxfam) կազմակերպու–թեան այս նորագոյն տեղեկագրին մէջ տեղ գտած այս թիւերը նորութիւն չեն։ Համաշխարհային մասշտապով հարստութեան անհաւասարութեան զարգացման ման–րամանութիւններուն կարելի է մօտէն ծանօթանալ նաեւ World Inequality Report 1918 տեղեկագրին մէջ եւ համանուն կազմակերպութեան կայքէջին վրայ տես–նել տարածաշրջաններու եւ առանձին երկիրներու պարզած պատկերը։

Հարստութեան անհաւասար բաժանումը, ընկերա–յին անարդարութեան ենթահողը, ինքզինք հաստատած պատմական գործընթաց մըն է, որ վերջին տարիներուն պայթուենափտանգային մակարդակի հասած է, ինչպէս կը զգուշացնեն Միջազգային Դրամական Ֆոնտը, Հա–մաշխարհային Դրամատունը եւ դրամատիրական հա–մակարգի կայունութեան վերահսկող այլ հաստատու–թիւններ։ «Կապիտալը 21րդ դարուն» անկիւնագրա–ձային գրքի հեղինակ Թոմաս Փիքեթթիի վերջին ու–սումնասիրութիւնը՝ «Brahmin Left vs Merchant Right: Rising Inequality and the Changing Structure of Conflict»ը, որ կարելի է ձեռքբերել World Inequality Database կայքէջէն, հաւասարութեան եւ ներքաղաքա–կան տազնապի միջեւ պատճառական կապը կը բացա–յայտէ լուսարձակի տակ առնելով ամենազարգացած երկիրներու կացութիւնը՝ Յրանսայի, Միացեալ Թագա–ւորութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն։

Առանց հարստութեան այսքան ծայրայեղօրէն անհաւասար բաժանման ստեղծած բեւեռացման դի–տակցութեան՝ համակարգային որեւէ փոփոխութիւն, որքան ալ որ բարեացակամ ու անկեղծօրէն տրամադր–ուած ըլլայ, չի կրնար երաշխաւորել որեւէ կայուն զար–գացում։

Աւարկայական տուեալներու վրայ հիմնուած ու–սումնասիրութիւններէ թելադրուած այս հաստատումը համագօր չէ հարստութեան հաւասար բաժանման յա–ւակնութիւնը ունեցած տնտեսական քաղաքականու–թեան բնորոշերու ջատագովումին, ինչպէս կարծրատի–պային ժամանակավիճէպ մտայնութիւն մը պիտի փու–թայ եղրակցնել։

Խորհրդային պատմական փորձի ձախողութիւնը եկաւ ցոյց տալու, որ սեփականադրկումը եւ Մարքս/Լե–նինեան այդ եզրայանգումին հետեւումով յղացուած տնտեսութեան պետական ծրագրաւորումը անպայմա–նօրէն ընկերային արդարութեան երաշխիք չեն կրնար ըլլալ։ Հարստութեան արդար ու հաւասար բաժանումը չի կրնար իրականանալ միակուսակցական ամբողջատի–րական կարգերու առկայութեան պարագային։ Խորհր–դային պատմական փորձառութիւնը անկասկած որ յա–ջողութիւններ արձանագրեց տնտեսութեան եւ հասա–րակութեան արդիականացման իր նախաձեռնութեանց մէջ։ Բայց փաստ է, որ առնուազն 1980–ական թուա–կաններէն սկսեալ խորհրդային բնորդը ոչ միայն չյա–ջողեցաւ հարստութեան ստեղծման մէջ զարգացած եր–կիրներուն հետ քայլ պահել, այլ, ընդհակառակը, վտանգաւոր լճացման իրավիճակի մէջ յայտնուեցաւ։ Կը մնայ, որ դրամատիրական համակարգի ներքին հա–կասութիւններու եւ հարստութեան հետզհետէ աւելի անհաւասար բաժանման արդիւնքով առաջանալիք հա–սարակական բեւեռացման մասին Մարքսեան, եւ ընդ–հանրապէս ձախակողմեան, մտածողութիւնը աւելի քան ճիշդ է 21–րդ դարու այս սկզբրին։

Բոլոր քաղաքական ուժերը, որոնք պատմականօ–րէն դերակատար եղած են զարգացած երկիրներու մէջ հասարակութեան կենսամակարդակի կայուն յառաջն–թացի ապահովման, բայց 1990–ականներու կէսերէն ի վեր անտեսած են հարստութեան անհաւասար բաժան–ման հետզհետէ սրող գործընթացը եւ դասեր չեն քա–ղած իրերայաջորդ միջազգային տազնապնեղէն՝ 1994, 1997, 2001, 2008, սուղ դին վճարեցին։ Թոնի Պէշլընե–րու օրինակով ազատ–չուկայականութեան հետ այնքան նոյնանալու իր անխոհմութեան հետեւանքով Եւրոպա–կան ընկերվում–ժողովրդավարութիւնը, որ յառաջապահ ուժը եղած էր քաղաքական համակարգերու ժողովրդա–վարացման եւ հարստութեան աւելի արդար բաժանման երաշխաւոր դարձած բարեխնամ պետութիւններու առաջացման, շատ երկիրներու մէջ արդէն իսկ դադրած է իշխանութեան այլընտրանք եւ կեդրոն–աջի գլխաւոր մրցակիցը ըլլալէ։

Հարստութեան վերաբաշխումի անհաւասարու–

թիւնը արտադրող համակարգը, որուն շարժիչն է 1980–ականներուն պետական թէ հասարակական ամէն վե–րահսկողութենէ ձերբազատուելու ձգտած դրամագլուխի համաշխարհային չըջազայումը, նիւթական թէ բարոյա–կան ամէն արժէք հեղուկացնող ուժը, ինչպէս Մարքսեան դարձուածքով կրնայ բնութագրուիլ, չէզոքացուց նոյ–նիսկ վերջին քսանամեակին ընկերային արդարութեան յանձնառութեան ամենայուսադրիչ պատմական շար–ժումը։ Խօսքը Հարաւային Ամերիկայի մէջ ծնունդ առած «թեքում դէպի Զախ» երեւոյթին եւ անոր անփա–ռունակ մարումին մասին է։ Պրագլիի եւ Արժանթինի մէջ ոչ միայն իշխանութեան վերադարձած են կեդրոն–աջ ուժերը, յաճախ քուէներովը անոնց, որոնք դարասկիզ–բին կեդրոն–ձախ ուժերուն տուին ընկերային արդարու–թեան ի խնդիր յանդուգն քայլերու դիմելու ինքնավս–տահութիւն, այլ մեծ ժողովրդականութիւն վայելած քա–ղաքական դէմքեր դէմ յանդիման կը գտնուին փտա–ծութեան լուրջ ամբաստանութիւններու եւ աւելի։ 21–րդ դարու ընկերվարութիւն կերտելու անկեղծ յանձնառու–թիւն ունեցող Չափէսի մը յաջորդած իշխանութիւնը Վենզուելան վերածած է մղձաւանջային երկրի մը։ Թէ Լուպյին արգելափակած պրագլիեան արդարադատական համակարգը այնքան ալ անկախ չէ աջ–պահպանողա–կան ուժերու ազդեցութենէն, ինչպէս որ կը փորձուի ներկայացնել միջազգային հանրային կարծիքին մօտ՝ լրջօրէն նկատառելի իրողութիւն է։ Բայց նոյնքան ճիշդ է, որ իշխանութեան վրայ գտնուող Աշխատաւորական Կուսակցութիւնը, կամայ թէ ակամայ, մասնակից դար–ձաւ ամբողջ ցամաքամասի մասշտապով գործող փտա–ծութեան համակարգին։

Դէմ յանդիման Զախակողմեան ուժերու հարս–տութեան անհաւասար բաժանումի սրման դէմ պայքա–րելու այս անկարողութեան, ծայրայեղ աջակողմեան ուժեր եւ իշխանութեան կեդրոնացումը ընդհուպ մին–չեւ նոր–ամբողջատիրականութիւն հասցնելու իրենց ախորժակները բնաւ չթաքցնող վտանգաւոր արկա–ծախնդիրներ տէր դարձան հասարակական դժգոհու–թեան եւ ցասումի դրամագլուխին։ Անոնց բնտրական յաջողութիւնները ընկերային արդարութեան եւ հարս–տութեան հաւասար բաժանման դրաւական չեն բնաւ։ Ընդհակառակը, իրենց հակա–համակարգային ամբո–խավարութիւնը ոչ միայն ուղի կը հարթէ ամէն տեսակի խտրականութեան թոյլատու իշխանութիւններ օրինա–կանացնելու, այլ սպառնալիք է համաշխարհային բա–րօրութեան, կայունութեան եւ թերեւս նոյնիսկ խաղա–ղութեան։ Բայց բարացուցական է հարստութեան ան–հաւասարութեան զոհ զանգուածներու մօտ կուտակուող ցասումին՝ գործազուրկ դարձողներէն մինչեւ փողոցնե–րը մնացածներ, աշխատանքային ծանր եւ անկայուն պայմաններու ստիպուած համաձայնողներէն մինչեւ ընկերային ապահովութեան նուազագոյն երաշխիքը չունեցողներ եւ, ընդհանրապէս, իր կենսամակարդակի բարելավման ու ընկերային վերելքային տեղաշարժի ամէն յոյս կորսնցուցած նորահաս երիտասարդութիւն։

Համակարգային իրական փոփոխութիւնը ընկե–րային արդարութեան հաստատումն է, որ առանց հարս–տութեան անհաւասար բաժանումի սրման դէմ պայքա–րին կը մնայ բարեկամեցողութիւն կամ բովանդակու–թենէ զուրկ թէկուզ եւ անկեղծ ճարտասանութիւն։

Այս Մալիս Մէկին աշխատանքի դատի պաշտպա–նութիւնը աւելի քան երբեք կ'իմաստաւորուի շահա–գործող ցեցերու մէկ տոկոսին շահերուն ծառայող հարս–տութեան անհաւասար բաժանումի դէմ պայքարով։ Ի՛նչ ալ ըլլան փողոցներին ու հրապարակները ողողած աշխատաւորներու եւ անոնց պահանջներուն ականջա–լուր քաղաքական ուժերուն օրակարգային խնդիրները, էականը կը մնայ հարստութեան անհաւասար բաժան–ման համակարգի փոփոխութիւնը։

Համակարգային փոփոխութեան պահանջով Երե–ւանի եւ Հայաստանի այլ քաղաքներուն փողոցները այս Մայիս Մէկին ողողուեցան բողոքառու զանգուա–ծով։ Ի՛նչ ալ ըլլայ Ազգային ժողովէն ներս քաղաքա–կան գործընթացի արդիւնքը, փողոց ելած հարիւր հա–զարաւոր երիտասարդները այս անգամ վճռական էին իրենց յեղափոխութիւնը, թէկուզ եւ «թաւշեայ», իր աւարտին հասցնելու եւ չապրելու անցած փորձերու հի–ասթափութիւնը։

Քուէարկութեամբ իշխանութեան հասած բայց ժո–ղովրդային լայն զանգուածի վստահութիւնը չվայելող վարչակարգերու երեւոյթը նոր չէ Հայաստանի մէջ։ Ընդ–հակառակը, մաս կը կազմէ անկախութեան յաջորդած պե–տականութեան եւ ընկերատնտեսական համակարգի կա–ռուցման եւ ամրակայման փորձերու հողովոյթին։

Առաջինը 1996–ին էր, երբ Լեւոն Տէր Պետրոսեա–նի վերընտրութիւնը հարցականի տակ դրուեցաւ ժո–ղովրդային լայնամասշտապ ցոյցերով, որոնք օրին բռնի ուժով ճնշուեցան։ Օրուան Հայոց Համազգգային Շարժ–ման իշխանութիւնը երկու տարի առաջ արդէն նախա–ձեռնած էր իշխանութեան կեդրոնացման, երբ կասեցու–ցած էր ընդդիմադիր գլխաւոր ուժին՝ Հայ Յեղափոխա–կան Դաշնակցութեան գործունէութիւնը եւ բանտար–կած անոր հայաստանեան ղեկավարութեան առաջնորդ

Եւ աշխատանքի (մոոցում) դատը Խ. Տէր Ղուկասեան

դէմքերը։ Այդ մէկը անհրաժեշտ էր ՀՀՇ–ին՝ Սահմա–նագրութեան անցկացման, բայց մանաւանդ՝ տնտեսու–թեան արագընթաց ազատականացման համար, ի շահս երկրին մէջ կազմաւորուող դրամատէր վերնախաւին, որ պիտի ամրագրուէր որպէս մենաշնորհային օլիկարգ։ Այդ բոլորը ենթադրաբար եղաւ օրէնքի ուժով եւ օրէն–քի անունով, բայց ատով հանդերձ օրուան իշխանու–թիւնները չյաջողեցան ամրապնդել իրենց օրինակա–նութիւնը։ Լեւոն Տէր Պետրոսեանի վերընտրութիւնը պիտի երաշխաւորէր ՀՀՇական իշխանութեան համա–կարգը, բայց այդ մէկը տեղի չունեցաւ։ Հայաստանի առաջին Նախագահի իշխանութենէն հեռացումը ար–դիւնք էր քաղաքական հատուածի ճնշումներուն, նո–րակազմ օլիկարգային խաւի մօտ իրեն հանդէպ վստա–հութեան կորուստին եւ, ինչպէս հետագային յայտնի դարձաւ, յաջորդ տասնամեակին քաղաքական դաշտէն հեռանալու փոխարէն աւելի քան հանգիստ կենսամա–կարգակի երաշխիքը տուող թոշակի մը։ Լեւոն Տէր Պետրոսեան պատուով հեռացաւ իշխանութենէ, երկրին խնայեց ապակայունացումը, միաժամանակ սակայն ձգելով քաղաքական կարեւոր ժառանգ մը ներազգա–յին եւ արտաքին ոլորտներուն մէջ։ Առաջինը, եւ ամե–նակարեւորը, մենաշնորհեալ օլիկարդներու խաւի մը ամրագրումն է, որ Ռոպերթ Քոչարեանի օրով, շնորհիւ մանաւանդ 2003–2008 տնտեսական աճին, վերածուե–ցաւ համակարգի։

Համակարգի դէմ ժողովրդային երկրորդ բողոքի ալիքը 2004–ին էր։ Վրաստանի եւ Ուքրանիոյ մէջ իրենց յաջող աւարտին հասած «գունաւոր յեղափոխու–թիւններ»ու անդրադարձը յստակ էր, որքան ալ որ անոնց ետին կանգնած Արեւմտեան ֆինանսական յատկացումներն ու մասնագէտներու մասնակցութիւնը բացակայէր Հայաստանի պարագային։ Այլ խօսքով՝ կար ժողովրդային դժգոհութեան ալիք մը, որ շատ հա–ւանաբար հետեւանք էր մէկ տարի առաջ կազմուած համաձայնական կառավարութեան հետեւանքով խորհրդարանական ընդդիմութեան չէզոքացման։ Բո–ղոքի խաղաղ ցոյցերը սակայն արդիւնքի չհասան։ Իշ–խանութիւնը բռնի միջամտելու ռիսքը առաւ այն վստահութեամբ որ ընդդիմադիր քաղաքական ոչ մէկ ուժ եւ ոչ մէկ ղեկավար պիտի յաջողէր շարժումի վերա–ծել ժողովրդային բողոքի ալիքը։ Այդպէս ալ եղաւ։ Ի գուր անցան օրին հրապարակ ելած ընդդիմադիր ղեկա–վարներու նախաձեռնութիւնները՝ ընդհուպ մինչեւ միջազգային մայրաքաղաքներ ճամբորդութիւն։ Բողո–քի այս ալիքին յաջորդեց առաջին հիասթափութիւնը։ Ի մասնաւորի երբ դէպքերէն համերաշխութեան բոլոր նախաձեռնութիւնները համակարգի թէկուզ եւ փոքր բայց նշմարելի բարեփոխման չյանգեցան։

1998–2008–ին, ինչպէս ըսուեցաւ՝ տնտեսական աճի օժանդակութեամբ, ամրապնդուեցաւ օլիկարգային համակարգ մը, որ մէկ կողմէ «կոպիտիոն» ժողովրդա–վարութեան բնորդով չէզոքացուցած էր խորհրդարա–նական ընդդիմութիւնը եւ միւս կողմէ ի դէմս Հայաս–տանի Հանրապետական Կուսակցութեան գտած կը թուէր ըլլալ իր յարատեւման եւ վերարտադրման քա–ղաքական ուժը։ Կը թուէր, թէ ՀՀ Կ–ի թեկնածու Սերժ Սարգսեանի իշխանութեան հասնիլը ժողովրդավարու–թեան խաղի օրէնքներու ձեւակախութիւնը յարգելով դիւրին գործընթաց մը պիտի ըլլար։ Բայց Լեւոն Տէր Պետրոսեանին կրկին հրապարակ գալը եւ Փետրուարին տեղի ունեցած ընտրութիւններու արդիւնքը մերժելով իր հետեւորդներու զանգուածը ապստամբութեան առաջնորդելը իրավիճակը բարդացուցին։ Հայաստանի մէջ արիւն հոսեցաւ, լայնամասշտապ հալածանք սկսաւ ընդդիմադիրներուն դէմ եւ նորընտիր Նախագահը իշ–խանութիւնը ստանձնեց ներքին թէ արտաքին շատ դժուար պայմաններու մէջ։ Յաջորդ ամիսներուն, եւ ի գին Փրոթոքոլներու վտանգաւոր «պլըֆ»ին, Սերժ Սարգսեան յաջողեցաւ ներքին թէ արտաքին լարուա–ծութիւնը նուազեցնել, թերեւս մինչեւ իսկ չէզոքացնել։ Եւ համակարգը պահպանել, թէկուզ եւ օլիկարդեանրէն ոմանց, անոնք որոնք իրենց գրաւը Լեւոն Տէր Պետրոս–եանին վրայ դրած էին, կարգի հրակրիելով։ Ի վերջոյ Ռուսիոյ մէջ Փութին այդ ձեւով յաջողած էր ամրապն–դել իր իշխանութիւնը... հետեւաբար, երբ առաջին ան–գամ իր իշխանութեան հասնելէն տասնամեակէ մը ետք Սերժ Սարգսեան «Մարտ մէկ»ի մասին նշեց Նիկոլ Փա–չինեանին հետ իր հանդիպման ժամանակ, իր պատկե–րացումով այդ ուրուականը ժողովրդային շարժման գլուխը անցած ընդդիմադիր պատգամաւորին պէտք էր յուշէր, որ զգուշ ըլլալ առնելիք քայլէն, որովհետեւ ի վերջոյ պիտի պարտուի։ Անշուշտ սխալեցաւ, որովհետեւ «Մարտ մէկ»ի ուրուականը ոչ միայն վախ չէր պատ–ճառեր, այլ ընդհակառակը աւելի վճռականաւ պիտի գարձնէր բողոքի ժողովրդային ալիքին մասնակիցները։ Արդարեւ, անցնող տասնամեակին, օլիկարգային հա–մակարգի ինքնավերարտադրման գործընթացը սրած էր նաեւ ընկերային ու քաղաքական բեւեռացումը՝ երկրի հարստութեան տէր դարձած մէկ տոկոսին եւ իր կենսա–

ՄԱՅԻՍ... Մար. էջ 7

Քսան Օրեր, Որոնք Ցնցեցին Երկրի Կեղտը

Կեղտ մը պաշարած էր մեր հայրենիքի հասարակական կեանքը: Կեղտը թափանցած էր ղեկավարման մակարդակէն մինչեւ ժողովրդային խաւերը: Կեղտը կը կրծէր մեր հաւաքական ներուժը, կը խորթացնէր մեր ազգային արժէքները, կը կեղեքէր մեր հայրենական հարստութիւնը:

Այս կեղտին շարժիչները ցեցերունման սեփական յղփացման համար կը վատնէին մեր ժողովուրդին ու յատկապէս ապագայ սերունդի նիւթական եւ մտաւոր ժառանգութիւնը: Ինչպէս ՀՅ Դաշնակցութեան հիմներգը կը հաստատէ՝ «չահագործող ցեցեր վատնեն, իսկ մեզ չոր հաց բաժին հանեն»:

Տակաւին տարիներ առաջ, այս կեղտի մասին Վահան Յովհաննիսեան կը զգուշացնէր բոլորին՝ թէ՛ կառավարութեան, թէ՛ քաղաքական ուժերուն, թէ՛ մտաւորականութեան եւ թէ ժողովուրդին: Իր «Մայրամուտ, որը հարկաւոր է կասեցնել» խորագրեալ յօդուածաշարքին մէջ (հրատարակուած 2013-ին «Երկիր» եւ «Ազգակ» թերթերուն մէջ), ան սեւով ճերմակի վրայ կը յայտարարէր բոլորին, «ո՛չ Ղարաբաղեան շարժման սկզբում, ո՛չ Սպիտակի երկրաշարժի սարսափելի օրերին, ո՛չ պատերազմի ժամանակ, ո՛չ մոլթ ու ցուրտ, սովի 90-ականներին, ո՛չ, առաւել եւս, 2000-ականների սկզբին մենք չէինք կարող պատկերացնել, որ, որպէս ազգ ու երկիր, կարող ենք յայտնուել այն կեղտի մէջ, որում այսօր ենք»:

Վահանին խարազանող խօսքերը օրին տեղ չհասան: Հակառակ իր եւ իր առաջնորդած կուսակցութեան՝ Դաշնակցութեան անհատնում ճիգերուն, կեղտը մնաց եւ ուժեղացաւ: Ժողովուրդը կը զգար ու կը տեսնէր կեղտը, սակայն տի-

րող ջլատիչ թմբիրը կ'արգելակէր անոր վերացման հաւաքական նախաձեռնութիւնը:

Այսպէս, կեղտին պատճառած հայրենական «մայրամուտը», որ պէտք էր կասեցնել՝ կը յամենար, առիթ տալով յաւելեալ վատնումներու, կեղեքումներու: Եւ կը շարունակէր անպատասխան մնալ Վահանին հարցումը, «ինչպէս մայրամուտից առաջ, երբ չգիտես՝ կը ծագի՞ արդեօք արեւը»:

Այդ արեւը սկսաւ իր շողերը արձակել երեք շաբաթ առաջ: Ապրիլ 13-էն մինչեւ մայիս 2, մենք ողջ հայութեամբ ականատես եղանք, զգացինք, մասնակից դարձանք քսան օրերու, որոնք ցնցեցին մեր երկրի կեղտը: Այսօր մօտալուտ կը թուի յուսադրող եւ յուսադրող արեւածագը Հայաստանի:

Քսան օրերուն պատահածը ոչ յեղափոխութիւն էր, եւ ոչ ալ ըմբոստութիւն: Ասիկա տարերային այն շարժումն էր, որ կրնար միայն մեր ժողովուրդի գիտակցական բնագոյն կատարել:

Մեր թշնամիները կը սպասէին եղբայրասպանութեան, որպէսզի աւելի տկարանայ հայ ժողովուրդի կամքը: Շատեր կը յուսային մեր հասարակութեան բարոյական կորուստը, որպէսզի աւելի երկփեղկուի Հայաստանը: Տարածաշրջանով շահագրգռուած ուժերը կ'ակնկալէին մեր երկրի քաղաքական անկայունութիւնը, որպէսզի աւելի դիւրաւ հակակշռելի դառնայ մեր ազգային ճակատագիրը:

Ի տես բոլորին, եղբայրասպանութեան փոխարէն մենք ապացուցեցինք մեր համերաշխութիւնը: Բարոյական կորուստի փոխարէն մենք ամրապնդեցինք մեր վճռականութիւնը: Քաղաքական անկայունութեան փոխարէն մենք փո-

խանցեցինք մեր հաւաքական տոկունութիւնը:

Հիմա ժամանակն է արդար Հայաստանի կառուցման, որ կը պահանջէ մեր բոլորին զօրակցութիւնը, իւրաքանչիւրիս մասնակցութիւնը, մանաւանդ ամէն մէկ հայու համերաշխութեան եւ զոհաբերութեան ոգին: Այս բոլորը պիտի ընենք, պէտք է ընենք, ո՛չ միայն յանուն Հայաստանի, այլ նաեւ յանուն Արցախի պահպանման եւ սփիւռքի ամրապնդման:

Կարող ենք ընել այս բոլորը, որովհետեւ մեր ժողովուրդը ցնցեց երեսուն տարուան կեղտը: Այդ կեղտին հիմնական աղբիւրը այն սովետական մարդն էր, որ ինքզինք կենդանի պահեց մեր մէջ: Կեղտը ցնցելով նախ պէտք է քանդենք այս օտարամուտ մարդը, որուն դէմ Դաշնակցութիւնը տասնամեակներ շարունակ պայքարեցաւ:

Ժիշդ է, մեզի համար Խորհրդային միութիւնը փուլ եկաւ 29 տարի առաջ: Սակայն Խորհրդային մարդը չմեռաւ մեր մէջ: Այդ մարդը, իբրեւ ղեկավար թէ իբրեւ ժողովուրդի մէկ անդամը, մնաց կենդանի՝ ինքզինք շարունակաբար վերարտադրելով կրկին ու կրկին անգամ՝ իբրեւ ղեկավար թէ իբրեւ ժողովուրդի մէկ մասնիկը:

Այսօր, հայրենիքի մէջ մեր ժողովուրդը գիտակցաբար թէ անգիտակցաբար սկսած է քանդել այդ Խորհրդային մարդը: Անկախ այն իրողութենէն, թէ գալիք օրերուն եւ ամիսներուն քաղաքական ուժերը ինչպիսի ընթացք կու տան Հայաստանը վերափոխելու իրենց խոստումներուն, այս Խորհրդային մարդը պէտք է քանդել: Որովհետեւ, այդ մարդը, իբրեւ առաջնորդ թէ ժողովուրդի բաղկացուցիչ տարր, տեւաբար խա-

փանեց արդար Հայաստանի ստեղծումը:

Շնորհիւ մեր ժողովուրդին առողջ բնազդներուն, հիմա կը քանդուի Խորհրդային մարդը, եւ կը քանդուի ճիշդ ձեւով՝ առանց բռնութեան, խաղաղ միջոցներով:

Եւ մեր ժողովուրդը ճիշդ է, միշտ ճիշդ եղած է իր բնազդներով: Այդ բնազդը այսօր իր ամենայն բերեղականութիւն ինքզինք կը պարտադրէ: Պէտք է քանդել Խորհրդային մարդը, պէտք է անէացնել այդ հրէշը, պէտք է վերջնականապէս վանել այդ տեսակը մեր մէջէն, որպէսզի կրկին չսպրդի մեր հաւաքական կեանքէն ներս՝ ո՛չ իբրեւ առաջնորդ, եւ ոչ եւս իբրեւ մեր ժողովուրդի մէկ բաղկացուցիչ տարրը: Ասիկա պիտի ըլլայ մեր ժողովուրդին առաջին յաղթանակը:

Մեր ժողովուրդի այս տարերային շարժումը յաղթանակն է Դաշնակցութեան գաղափարներուն, որոնք ծնունդ տուին Հայաստանի ազատագրութեան եւ մեր անկախ պետականութեան հաստատման: Այս շարժումը նաեւ յաղթանակը պիտի ըլլայ Դաշնակցութեան առաջադրած արդար Հայաստանին, որ անպայման պիտի գայ:

Խորհրդային մարդուն քանդումը նաեւ յաղթանակն է Դաշնակցութեան պայքարին, զոր մէկ դար միայնակ մղեց պոլշեիզմի դէմ, սակայն որուն այսօր տիրութիւն սկսած է ընել մեր աննման ժողովուրդը:

Ի տես այս բոլորին, այսօր Արամը, Քաջազունին, Դրոն, Նժդեհը եւ մեր միւս մեծերը կը սկսին հանգիստ ննջել իրենց չիրմներուն մէջ:

ՍԵՂՈ ՊՈՅԱԺԵԱՆ

Linda Kharaboyan

Notaire
Notary

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

Ձեր և ուտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցե՛ք մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS

optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO
Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL-Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.

Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc., H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL

450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միքաէլ շրջանին մէջ:
Հաճեցե՛ք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX

RE/MAX 3000 inc.

Agence immobilière

Elie Berberian

Courtier immobilier | Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECouvrement SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU

Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
krikormar@gmail.com

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666

FIVE STAR
ELECTRIQUE

CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

SOSIE DERNERSESSIAN

MORTGAGE AGENT
LICENCE #M12001830

716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

CENTUM

Metrocap Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN

NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L 1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լոտար Ե. Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան

4 ՀՈՐԻԶՈՆ, 14 ՄԱՅԻՍ 2018

Նիկոլ Փաշինեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուեցաւ

Կենսագրական գիծեր

Նիկոլ Փաշինեան ծնած է 1 Յունիս 1975-ին, Իջեւան: 1991 թուականին ընդունուած է Երեւանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ (ժուռնալիստիկայի բաժին) եւ լրագրողական գործունէութեան պատճառով հեռացուած է անկէ 1995-ին:

1994-1995 թուականներուն եղած է «Լրագիր», «Լրագիր օր» եւ «Մոլորակ» օրաթերթերու լրագրող, 1998-1999 թուականներուն «Օրագիր» օրաթերթի գլխաւոր խմբագիր, իսկ 1999-2012 թուականներուն «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր:

2006-ին եղած է «Այլընտրանք» հասարակական քաղաքական նախաձեռնութեան հիմնադիր անդամ, 2007-ին «Իմպիւզմենտ» դաշինքին համամասնական ցուցակին մէջ յայտնուած է (1-ին համար): 2008-ին եղած է ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր Պետրոսեանի նախընտրական շտապի անդամ, իսկ 2015-ին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան հիմնադիր անդամ:

2012-2017 թուականներուն եղած է Աժ պատգամաւոր (Համամասնական ընտրակարգ, ՀԱԿ), Աժ արտաքին յարաբերութիւններու, Աժ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերու մշտական յանձնաժողովի անդամ, 2012-2013-ին՝ Աժ էթիկայի հարցերով ժամանակաւոր յանձնաժողովի նախագահ, «Հայ ազգային կոնգրես» խմբակցութեան անդամ:

2 Ապրիլ 2017-ին Աժ-ի պատգամաւոր ընտրուած է «Ելք» կուսակցութիւններու դաշինքի թիւ 4 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակով:

30 Ապրիլ 2018-ին առաջադրուած է ՀՀ վարչապետի թեկնածու, իսկ 8 Մայիսին՝ ընտրուած է վարչապետ:

Ամուսնացած է եւ ունի չորս զաւակ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը կը վերաբժեւորէ իր քայլերը

Համաժողովրդական շարժումը եւ Հայաստանի մէջ ընթացող քաղաքական զարգացումները փորձութիւն էին քաղաքական ուժերուն համար: Այդ փորձութիւնը, ըստ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արսէն Համբարձումեանի, Դաշնակցութիւնը արժանապատիւ կերպով յաղթահարած է: Ստեղծուած իրավիճակին մէջ կուսակցութեան շարքերէն ներս եւս չէին կրնար տարակարծութիւններ չըլլալ:

«Ժողովրդական շարժման սկիզբէն ալ Դաշնակցութիւնը արձանագրեր էր, թէ երկրին մէջ առկայ է խորքային եւ որակական փոփոխութիւններու յստակ համաժողովրդական պահանջը: Այդ մէկը բաւարարելու եւ իրավիճակը առանց ցնցումներու լուծելու համար կուսակցութիւնը բազմիցս հանդէս եկաւ քաղաքական երկխօսութեան առաջարկով: Անոնց յաջորդեց նաեւ քաղաքական կոալիցիայէն դուրս գալու, ժողովուրդի թեկնածուին շուրջ համաձայնութիւն ձեռք բերելու, յետոյ արդէն վարչապետի ընտրութիւններուն Փաշինեանին սատարելու մասին յայտարարութիւնները», կը տեղեկագրէ «Երկիր»ը:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը կը պահանջէ Ադուան Վարդանեանէն վար դնել պատգամաւորական իր լիազօրութիւնները

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը հրապարակեց յայտարարութիւն մը՝ արտայայտելով իր գնահատականը ՀՅԴ պատգամաւորական խմբակցութեան անդամ Ադուան Վարդանեանի՝ Ազգային ժողովի բեմէն կատարած յայտարարութեան:

ՀՅԴ Գերագոյն մարմինի յայտարարութեան մէջ կ'ըսուի.

«Այսօր ՀՀ ազգային ժողովում Աժ

Լիբանանեան Խորհրդարանական Ընտրութիւններուն ՀՅԴի Առաջադրած Չորս Թեկնածուներէն Երեքը Ընտրուեցան

Կիրակի, 6 Մայիսին, շուրջ տասնամեակ մը տեւած սպասումէ ետք այդ օրը լիբանանցի քաղաքացիները կարելիութիւն ունեցան ընտրելու երեսփոխանական թեկնածուներ, որոնք իրենց ներկայացուցիչները պիտի ըլլան խորհրդարանին մէջ:

Այս ընտրութիւններուն, բնականաբար, հաշուութիւնը եւս բերաւ իր աշխոյժ եւ տիրական մասնակցութիւնը, որովհետեւ լիբանանահայութեան իսկական եւ արժանաւոր ներկայացուցչութեան խնդիր գոյութիւն ունէր: ՀՅԴի կողմէ առաջադրուած էին չորս թեկնածուներ՝ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բազրատունի, Յակոբ Թերզեան, Սերժ Չուխատարեան եւ Ալեքսանտր Մաթոսեան:

Կիրակի օր, շուրջ կէս գիշերին, արդէն իսկ յստակ դարձան ընտրութիւններուն նախնական արդիւնքները, որոնց համաձայն, ՀՅԴի առաջադրած չորս թեկնածուներէն երեքը՝ Յակոբ Բազրատունի, Յակոբ Թերզեան եւ Ալեքսանտր Մաթոսեան, ընտրուած էին երեսփոխան:

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բազրատունի երեկոյեան «Էմ.Թի.Վի.» պատկերասփիւռի կայանին հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ Դաշնակցութեան ընտրազանգուածը, ըստ սովորականին, իր մասնակցութիւնը բերաւ երեսփոխանական ընտրութիւններուն՝ աւելցնելով, որ ընտրական նոր օրէնքին լոյսին տակ երեսփոխանական ընտրութիւնները կատարուեցան:

ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Ադուան Վարդանեանի հնչեցրած տեսակէտը անձնական որոշում է եւ չի համապատասխանում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնական դիրքորոշմանը: Կատարուել է կարգապահական կոպիտ խախտում, որը կը դառնայ քննութեան նիւթ: Ըստ այդմ, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը պահանջում է Ադուան Վարդանեանից վաղաժամ վայր դնել պատգամաւորական մանդատը»:

Նշենք, որ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Ադուան Վարդանեան Ազգային ժողովի բեմէն յայտարարած էր, թէ հակառակ այն իրողութեան, որ Դաշնակցութիւնը որոշած է քուէարկել յօգուտ Նիկոլ Փաշինեանին, ինք պիտի չմասնակցի վարչապետի պաշտօնին Նիկոլ Փաշինեանի ընտրութեան քուէարկութեան եւ պատրաստ է իր պատգամաւորական լիազօրութիւնները վար դնելու, եթէ կուսակցութիւնը այդ պահանջէ իրմէ:

Ադուան Վարդանեան հեռացուեցաւ ՀՅԴ շարքերէն

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը կը յայտնէ, որ քննելով ընկեր Ադուան Վարդանեանի կարգապահական հարցը, որոշած է զայն հեռացնել ՀՅԴ շարքերէն:

ՀՅԴ Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արսէն Համբարձումեան, մեկնաբանելով Վարդանեանի հեռացման որոշումը՝ յայտնեց.

«Այո՛, ՀՅԴ Հայաստանի ԳՄ-ն կարգապահական տնօրինում է կատարել՝ Ադուան Վարդանեանին հեռացնելով կուսակցութեան շարքերից, իսկ աւելի վաղ, ինչպէս գիտէք, պահանջել էինք վայր դնել պատգամաւորական մանդատը: Անժխտելի է, որ Ադուան Վարդանեանը երկար տարիներ մեծ ներդրում եւ դերակատարութիւն է ունեցել ՀՅԴ Հայաստանի կազմակերպական կառոյցում, սակայն Դաշնակցութիւնն ունի սկզբունքներ, աւանդոյթներ եւ կազմակերպական կանոններ, որոնք չեն կարող շրջանցել ոչ մէկի:

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 BAKERY AND FINE FOODS OPEN 7 DAYS A WEEK! WEEKDAYS 9 am - 7 pm SATURDAY 9 AM - 6 PM SUNDAY 9 AM - 5 PM LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN	 Noor Fine Food Gourmet Mediterranean Cuisine 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	 I.D.A. Part of the <i>Royal</i> family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԴ.

3. Վիլսոնի սահմանադժած Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ մտած էր։ Հակառակ մեր թշնամիներու ակնկալութեանց, հայ ցեղը ամբողջովին բնաջնջուած չէր։ Իսկ մնացորդ բեկորները յամառօրէն կը կառչէին իրենց հայրենիքին եւ գերագոյն ճիգով մը կը շէնցնէին անապատ դարձած գիւղերն ու ավանները։ Անոնք կը նախընտրէին իրենց հայրենի քարերը լգել ու ինքնապահ մնալ, քան երթալ Կովկաս, դռներու առջեւ մուրացիկ գաղթական մը դառնալ։

Ռուս բանակն այս բոլորը կը տեսնէր։ Ռուսական կառավարութիւնը սկսած էր լրջօրէն որոճալ այս կենսունակ ժողովրդի մասին։ Առաջին յայտնի եղած ծրագիրն այն եղաւ, որ ռուս կառավարութիւնը վճռեց Ալաշկերտի դաշտի լաւագոյն մասերը լեցնել զօգաքնեւրով։ Այս վճիռը, որ յետագայ դէպքերու պատճառով չիրականացաւ, միտումն ունէր ռուսացնել Տաճկահայաստանը։

Իսկ երկրորդ ծրագիրը, որ վճռականօրէն գործադրուեցաւ ռուսական կառավարութեան կողմէ, ուղղուած էր հայոց քաղաքական եւ զինուորական ուժին դէմ։ Ազատուած Տաճկահայաստանը թէ՛ ներգաղթով եւ թէ՛ թրքական գեհնէնէն ազատուած բեկորներով կենդանութիւն կ’առնէր։ Միւս կողմէ, այդ նուիրական հոգեւրուն վրայ կազմ ու պատրաստ կը մնային հայկական կամաւորական գունդերը, որոնք երկու տարուայ պատերազմական փորձառութիւն ձեռք ձգած էին եւ յաղթական անցեալ մ’ունէին։ Անոնք հայոց զինուորական կազմակերպուած ուժն էին եւ քաղաքական կշիռ մ’ունէին, թէ՛եւ անորոշ ապագայով, բայց արդէն վերածնիլ սկսող հայրենիքի համար։ Ռուսական կառավարութիւնը այդ ուժի ներկայութիւնը գտաւ վտանգաւոր։

Ահա նոր ու անսպասելի հարուած մը, կամաւորական գունդերու լուծումը։ Սակայն կամաւորական ուժերու ցրումը կարծես թէ մեծ ցնցում չառաջացուց հայութեան մէջ։ Կարծես թէ մենք յոգնած էինք։ Թէեւ տհաճութեամբ, բայց տեղի տուինք առանց աղմուկի։ Կար պարագայ մը։ Տաճկահայաստանը գրաւուած էր արդէն։ Իսկ այդ սահմաններէն անդին հայաբնակ վայրեր մնացած չէին, որ դէպի իրենց գրաւէին կամաւորական ուժերը։ Այս իրողութիւնը եւս պատճառ մըն էր, որ հայկական ուժերը առանց մեծ սփոփանքի ցրուէին։

1916–ի գարնան, զինուորական կտրուկ հրամանով մը հայկական գունդերը լիքուիտացիայի կ’ենթարկուէին իննուսի, Բիթլիզի, Վանի եւ Պարսկաստանի մէջ։ Ու անոնց տեղ, ռուսական որեւէ գունդի մէկ գումարտակն իր մէջ կ’ամփոփէր այն հայ զինուորները, որ կը գտնուէին կամաւորական գունդին մէջ։ Այդ գումարտակը կը կոչուէր հայկական գումարտակ․ այսինչ սպայի ղեկավարութեամբ եւ ենթակայ՝ այնինչ գնդապետին, ճիշդ նոյն գունդը կազմող միւս երկու գումարտակներուն պէս։

Ռուսահայ հին մարտիկները, որոնք զինակոչի ենթակայ չէին, կը հեռանային Կովկաս։ Տաճկահայերէն ոչ ոք չէր մտներ ռուսական նորակազմ գումարտակի մէջ, ու պարտաւորիչ ալ չէր այդ։ Անոնք մեծամասամբ զինուած՝ ցրուեցան տեղական ժողովրդի մէջ ու դարձան զինուած ժողովուրդ։ Հեռաւոր գաւառներէն ու գաղութներէն եկած կամաւորներու մեծ մասը դարձաւ Կովկաս

Այսպիսով, երկրի գործիչներու առջեւ կը ցցուէր խիստ կարեւոր խնդիր մը։ Մենք պարտաւորուած էինք ժողովրդական զինեալ ուժ մը հրապարակ բերելու մասամբ լրացնել այն պակասը, որ կ’առաջանար կամաւորական գունդերու բացակայութեամբ։

Այն ժամանակ երբ Ազգ․ Բիւրօն եւ Կովկասի հայ քաղաքական շրջանակները Թիֆլիզի եւ Երեւանի մէջ զբաղուած էին կամաւորներու լիքուիտացիայի գործով, անկարելի էր որ անոնք նոր դիմում մը կատարէին կովկասեան ճակատի ռուսական հրամանատարութեան ու կրնային արտօնութիւն մը ձեռք ձգել նոր ուժեր կազմակերպելու համար։ Այդ ուղղութեամբ մտածում ալ չկար։ Ուրեմն խնդիրը կը մնար տեղի վրայ լուծել, ինչպէս այդպիսի քայլ մը յաջողած էր 1914–ի աշնան, Բասէնի շրջանի մէջ։ Այժմ, երբ Տարօնն ու Վասպուրականը մեր ձեռքն էին, տեղական հնարաւորութիւններն աւելի շատ էին, քան մենք ունէինք 1914 եւ 1915–ին Բասէնի եւ Ալաշկերտի մէջ։ Հիմա մենք ունէինք աւելի կենսունակ, ու աւելի ռազմունակ ժողովուրդ մը։ Միւս կողմէ, անոր վրայ կուգար կ’աւելնար զինուած եւ զինավարժ կամաւորներու բազմութիւն մը, որ ինքնին պատրաստի ատաղձ մըն էր, նոր ուժ մը ստեղծելու համար։

Վանի մէջ տեղական ինքնապաշտպանողական փոքրիկ խմբեր կը ստեղծուէին, որոնք յետագային աւելի խոշոր ուժ մը պիտի դառնային գնդ․ Տիգրան

Բաղդասարեանի, Լեւոն Շադոյեանի եւ Բուլգարացի Գրիգորի ղեկավարութեամբ։

Էրզրումի եւ Տրապիզոնի շրջաններու մէջ հոծ հայութիւն չկար։ Բացի այդ, ռուսական գլխաւոր բանակը հող կեդրոնացած էր եւ խիստ հսկողութիւն կ’ընէր, որ իր քթին տակ, կեդրոնախոյս ուժեր չստեղծուէին։ Բայց աւելի ուշ, այդ շրջաններու մէջ ալ, Մուրատի եւ Սեպուհի ջանքերով, հայկական ուժեր կազմակերպուեցան, որոնք ազգաշէն դեր մը կատարեցին։

Խնուսի եւ Մալազկերտի շրջաններու մէջ բաւական զինուած խմբակներ ցրուած կային, կապուած մնալով գաղթականական մարմիններուն։ Իսկ Քաղաքներու Միութեան գործիչները, Ռուբէնի ղեկավարութեամբ, կրցած էին զանազան արտօնութիւններով, բաւական թուով զինուած մարդիկ իրենց շուրջ հաւաքել, որոնք կրնային ազատօրէն գէնք կրել։

Այն ինչ որ կարելի էէր լայն չափով ընել վեր յիշուած թիկունքային վայրերու մէջ, հնարաւոր էր իրականացնել անմիջական ճակատի վրայ։ Մշոյ եւ Սասնոյ շրջանը լարուած ճակատամարտի վայր էր, ուր մենք աւելի քան պէտք ունէինք զինուած ուժերու։ Մշոյ շրջանի ռուսական ուժերը կ’ենթարկուէին 4–րդ կորպուսի հրամանատարութեան, որու կեդրոնական սպայակոյտը իննուսի մէջն էր։ Մենք նման ձեռնարկի մը համար անյուսալի կը գտնէինք Կովկասի գլխաւոր հրամանատարութեան դիմում ընել։ Հետեւաբար, նախընտրեցինք դիմել իննուսի սպայակոյտին։ 4–րդ կորպուսի հրամանատարը, այն ատեն, Զօր․ Դէվիտն էր, որ թոյլ մարդ էր, սակայն սպայակոյտի պետն էր վրացի Ջոր․ Մոէվանի, որ հանդարտ ու քաղաքավարի մարդ մ’ըլլալով հանդերձ, գիտակից հայտուեաց մըն էր։ Մենք կը ներկայանայինք սպայակոյտին, առաջարկելով մեր աջակցութիւնը ռուսական բանակի թիկունքն ապահովելու քրդական եւ թրքական յարձակումներէ․ ժողովրդական միլիցիայով պահպանել ժողովրդի խաղաղութիւնը եւ հետախուզական խմբերով՝ առաջնորդ հանդիսանալ ռուսական արշաւող բանակին, Սասնոյ լեռնաշղթայէն թափանցելու աւելի խորերը։ Մենք այդ բոլորի փոխարէն կը խնդրէինք միայն գէնք կրելու արտօնութիւն եւ ռազմամթերք։ Մնացածը պիտի ընէինք մեր միջոցներով։

Բարեացակամ, բայց կեղծ վերաբերմունքի հանդիպեցանք։ Զօր․ Մտիվանին շատ քիչ արտօնութիւն տուաւ մեզ, միայն գաղթականական գործերը լաւ վարելու համար․ մնացածը թողուց ճակատներու հրամանատարներուն, որոնք սակայն, Զօր․ Մտիվանու արտօնութիւնը անհրաժեշտ կը գտնէին։ Քանի մ’անգամուայ տեսակցութիւններէ յետոյ, ես եկայ այն եզրակացութեան որ Զօր․ Մտիվանիէն բացի վնասէն, ուրիշ որեւէ օգուտ չենք կրնար սպասել։ Այդ պատճառով աւելի քան զգուշացանք մեր գործը իննուսի սպայակոյտին հետ կապել։

Բարեբախտաբար Մշոյ մէջ կը գտնուէր Գնդապետ Սիլիկով, որ կայազօրի պետն էր։ Քանի մը տեսակցութիւններէ յետոյ միայն՝ կրցայ գիտնալ որ անիկա հայ մըն էր։ Գնդ․ Սիլիկովի գունդը Զօր․ Նազարբէգեանի գլիգիւրային կը պատկանէր, բայց զինուորական կարգադրութեան մը բերումով, փոխանակ Բիթլիզի մէջ մնալու, Սասնոյ առաջաւոր դիրքերն անոր յանձնուած էր։ Գնդ․ Սիլիկով շատ բարեացակամ եղաւ եւ ըմբռնեց մեր մտահոգութիւնները, սակայն շատ քաշուող մարդ էր եւ կը զգուշանար իրմէ բարձր ղեկավարներէն։ Անոր թելադրանքով ես ներկայացայ 16–րդ գլիգիւրայի հրամանատար Զօր․ Սավիցկուն, որ կարծեմ ուկրաճացի էր․ ագնիւ հայրենասէր մը, բաւական անկախ մարդ, ու մեր շարժումները ըմբռնող։ Այս վերջինն ընդ առաջ գնաց մեր ծրագիրներուն եւ Գնդ․ Սիլիկով աւելի համարձակ եղաւ իր արտօնութիւններու մէջ։ Մենք կրցանք ստանալ բաւական քանակութեամբ գէնքեր, ռազմամթերք, հագուստ եւ պաշար։

Մենք այլեւս հնարաւորութիւն ունէինք Մշոյ եւ Դաշտի մէջ լեցուած զինուած ուժերը պարտկել։ Անդրանիկի գունդի Տարօնցի բոլոր կամաւորներն եկած էին եւ գիւղական խումբերուն միացած, որոնք թիկունքային աշխատանք կը կատարէին։ Սասունցիներու մեծ մասը կը մնայ Մշոյ մէջ․ իսկ ստուար խումբ մը Մանուկի եւ այլոց ղեկավարութեամբ երկրի խորերէն հայ բեկորներու ազատագրութեան գործով կը զբաղէր։ Ուրիշ խումբ մը առաջնորդ հետախուզողի պարտաւորութեամբ Սասուն բարձրացած էր եւ կը գտնուէր Սիլիկովի գնդի հետ։

Այսպէս, լաւագոյն գործակցութիւն մը ունեցանք Գնդ․ Սիլիկովի հետ․ ատեն մը, երբ ոչ ինք եւ ոչ ալ մենք կրնայինք մտածել թէ՝ օր մը անիկա պիտի դառնար Հայաստանի Զօրավար Սիլիկեանը եւ անկախ Հայաստանի ճակատագրական օրերուն դարձեալ պիտի



գործակցէինք իրարու, առանց ռուսական զինուորական իշխանութեան թոյլտուութիւնն աղերսելու։

4. Ժողովրդական զինուած ուժերը մէկ ամբողջութիւն չէին կազմեր եւ բանակի կերպարանք չունէին․ սակայն անջատ անջատ նահանգներու եւ գաւառներու մէջ գոյութիւն ունեցող ազգային կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ զինուորական ուժերու ղեկավար ձեռքը նոյն շղթային կը պատկանէր, եւ հետեւաբար՝ հաւաքական կամքի մը եւ ծրագրուած աշխատանքի մը արտայայտութիւնն ունէին։ Ժողովրդական ուժերը, կամաւորական գունդերու պէս պարտաւորիչ եւ մնայուն պարտականութիւններու ենթակայ չէին։ Անոնք, բացառապէս կռուի ճակատին մօտիկ վայրերու մէջ կ’օգտագործուէին որպէս հետախոյզներ կամ յառաջապահներ։ Այդ ժամանակաւոր յանձնարարութիւններէն յետոյ, անոնք կը դառնային ժողովրդի մէջ, ու կը զբաղուէին թիկունքային աշխատանքով։

Երկու տարուայ պատերազմական կեանքը, կամաւորական շարժումը, նահանջներն ու յառաջխաղացութիւնները ընտելացուած էին Տաճկահայ ժողովուրդը ռուսական բարք ու վարքին, բարեկամութեան ու չարակամութեան։ Ժողովուրդը յարմարուելով ռուսական բանակի շարժումներուն, կարելի հնարամտութեամբ եւ գիմացկունութեամբ իր գոյութեան պայքարը կը տանէր։

Այդ քիչ թէ շատ զինուած ժողովուրդը, գրաւուած ամբողջ Հայաստանի մէջ, 1916–ի ամրան, կը վերագնահատէր թրքական կոտորածներու ահաւորութիւնը, կը սթափէր իր շշմածութեանէն, կը դադրէր լաց ու կոծէն եւ կը բռնէր նոր ուղի մը, փոխադարձութեան ուղին։ Այս փոխադարձութեան գաղափարը, որպէս վրէժի ըմբռնում՝ ընդհանուր էր։ Սակայն վրէժի եւ ատեղութեան զգացումն ամէն տեղ եւ մեր ժողովրդի զանազան զանգուածներու մէջ գիտակցական չէր, գործելակերպի եւ նախամտածուած ծրագրի մը բնոյթը չէր կրեր, ու կը մնար պարզ արտայայտութիւն մը, առանց գործնական արդիւնքի։ Բայց ինչ որ էականն էր, ու կ’արժէ ընդգծել, այդ այն է որ վրէժի ու ատեղութեան զգացումը բեկում մը կ’առաջացնէր հայ կեանքի մէջ, ու նոր գործելակերպի մը նախանշանը կուտար։

Այս գործելակերպի առաջին նախանշանները մենք կը տեսնենք մասնաւորաբար Տարօնի շրջանին մէջ։ Տարօնի շրջան ըսելով պիտի ըմբռնենք Սասունը, Մուշ եւ Դաշտ, իննուսը, Վարդօն, Բուլանուխ–Մալազկերտը եւ Ախլաթ–Բիթլիզը։

Պատերազմի բերումով Հայաստանի թրքութեան մեծագոյն մասը կամ բնաջնջուած էր, կամ հեռացած էր Թուրքիոյ ներքին նահանգները։ Քիւրդերն ալ թէեւ նոյն վիճակին ենթարկուած էին, բայց բաւական թուով մնացած էին քանի մը լեռնամասերու մէջ։ Հայկական շարք մը շրջաններ, մնալով զուտ հայաբնակ, ցեղային պայքարն ինքնաբերաբար դադրած էր։ Բայց կային շրջաններ, ուր պայքարը տակաւին կը շարունակուէր։ Այդպիսի շրջաններն էին Էրզրում–Երզնկան եւ Տարօնը։

Տարօնի բոլոր գաւառներու մէջ ծուարած հայութիւնը թուրքերու եւ քիւրդերու դէմ կեանքի ու մահուան պայքարի մը բռնուած էր։ Թիկունքային պատերազմ մըն էր այդ, որ տեղի կ’ունենար երկու նպատակով․ առաջին, հայացնել Տարօնը, եւ երկրորդ, ջլատելով թշնամի տարրերը, ապահովել հայութեան թիկունքը։ Այս ապահովելու աշխատանքը ռուսական բանակի գործին ալ կուգար։ Սակայն ռուսական զինուորական իշխանութիւնը շատ յաճախ արգելքներ կը յարուցանէր ու կը խափանէր կենսունակ ուժերու գործունէութիւնը։ Ժողովուրդը ընտելացեր էր ընել ա’յնքան, որքան կարելի էր անմիջապէս շահիլ։

Այս պայքարը միայն վրէժով ու ատելութեամբ կարելի չէ բնորոշել։ Ինչպէս ըսի, անոր էութեան մէջ մենք կը տեսնենք զուտ հայկական հայրենիք մը կազմելու իրական ձգտումը։ Ատոր վրայ պէտք է աւելացնել տնտեսական ազդակը։ Հայերը ամէն ինչէ գրկուած էին։ Դուրսէն եկած օգնութիւնը չնչին էր։ Ժողովուրդը

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ՏԱԾԿԱՀԱՅ... Ծար. էջ 8



Հայաստանի Ա. Հանրապետություն

Հարիւր տարիներ է ի վեր մենք շարունակ կը վերսիշենք Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որ առիթը ստեղծեց ապահովելու հայ ժողովուրդին ապագան: Սարդարապատի, Ղարաբաղի և Բաշ Ապարանի ճակատամարտերու յաղթանակներով հայ ժողովուրդը առաւ անհրաժեշտ քայլ մը դեպի իր արդար Նպատակը: Իր վրեժխնդիր հայրուկներուն շնորհիւ էր, որ ան արժանացաւ իր կարճատեւ, բայց փառապանծ, երեք տարուան անկախ պետութեան:

Մայիս 28-ը կը նշանակէ յաղթանակ, կը նշանակէ անկախութիւն, կը նշանակէ պայքար: Հարիւր տարի անց, մենք ունինք ոչ միայն անկախ Հայաստան մը, այլեւ սփիւռք մը, որ հաւատարիմ մնալով իր հայրենիքին, անձնուրացօրէն ինքզինքը մատուցած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի երազները իրականացնելու սրբազան նպատակին:

Արամ Մանուկեանի օրինակով ներշնչուած, մենք, իբր դաշնակցական երիտասարդներ, կը վերահաստատենք մեր հաւաքական կամքն ու ուժսը մեր հայրենիքին եւ հայ ժողովուրդին հանդէպ, միշտ ձգտելով մեր գերագոյն Նպատակին՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանին:

Նիկոլ Աղբալեան ըսած է. «Երբ գիշերը գայ, մտքէ ձեր հոգիի սենեակը եւ խօսքէք ձեր խղճի հետ եւ ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովուրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնագոհ, որքան Արամը, տուե՞ր էք ձեր ամբողջ կենսքը հայ ժողովուրդին, ինչպէս Արամը...»:

Անդրանիկ Բաշա Գունտաքճեան, «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղ

Մայիս 28

Անհնար կը համարեմ կարճ տողերով ներկայացնել հայ ազգի պետականութեան վերածնունդը, կործանումէն հարկւրաւոր տարիներ ետք, հայկական իողներուն վրայ, որ Նոյնիկըն հրաշք մըն էր՝ իրագործուած հերոսներու արիւնով, 28 Մայիս 1918-ին: Սակայն Միքայել Նալպանտեան այդ թուականէն տարիներ առաջ պատկերացոյց զայն, երբ ըսաւ իր «Երգ ազատութեան» բանաստեղծութեան մէջ.

«Ես անբարբառ մի մանուկ
երկու ձեռքս պարզեցի
եւ իմ անգոր թետերով
Ազատութիւնս գրկեցի»

ճիշդ էր անգոր էիք իրաւիճակով, բայց ուժեղ էիք կամքով: Ինչպէ՞ս ուժեղ չըլլայինք, երբ հայ ազգը ծնունդ տուած էր Արամներու, Դրօներու, Միլիկեաններու, որոնք բառացիօրէն անգոր թետերով ազատութիւնը գրկեցին՝ առաջնորդելով, մղելով, կազմակերպելով ճակատագրական մարտեր (Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաբաղիսէ), որոնց շնորհիւ հայ ազգը առաջին հերթին փրկուեցաւ երկրորդ ցեղասպանութենէ մը եւ վերստին դարձաւ հոգի եւ պետականութեան տեր ազգ:

Այո՛, այդ անգոր մանուկը առողջ մնաց 900 օրեր, ապա 71 տարիներ ուժաթափուեցաւ, սակայն 1991 Սեպտեմբեր 21-ին վերակենդանացաւ եւ իր ազատութիւնը հիմնեց ա՛յն հիմքին վրայ, զոր իր նախահայրերը արեան գնով կերտած էին:

Փա՛ռք հերոսներուդ, փա՛ռք զաւակներուդ, հա՛յ ժողովուրդ, փա՛ռք ու պարծանք նուիրեալ հերոսներ ծնող Հայ Յեղափոխական Ղաշնակցութեան:

Մոսիկ Արզումանեան, «Լեւոն Շանթ-Բեկոր Աշոտ» մասնաճիւղ

May 28th isn't what you think it is

The significance of the independence of our first republic isn't simply an occasion filled with patriotic songs, Armenian community centre gatherings, flag waving, or the heroic battle of Sardarabad.

It is a remarkable testament of a people's resilience. Armenians became proof to the world that independence was achievable despite the odds. For hundreds of years, Armenia could not be Armenia. It was a people without a state, yet its culture and perseverance were strong enough to outlive the empires that annexed its lands.

The republic's first independence on May 28, 1918 was the short-lived realization of our small nation's dream. It symbolized our struggle for self-determination throughout the ages. Even after the Red Army marched through the streets of Yerevan, ending the first Republic of Armenia, we still look upon those short few years with sentimentality.

It wasn't until 1991 that our nation saw independence again. But, we never forgot our roots and continue to celebrate the first republic and its significance as a symbol of our struggle for freedom and sovereignty.

Today, Mayr Hayastan, along with millions of Armenians, both in the republic and in the diaspora, stands guard ready to defend our long-anticipated and well-deserved independence.

"It was a small nation of course, a very unimportant nation, surrounded on all sides by enemies, but for two years Armenia was Armenia, and the capital was Yerevan. For the first time in thousands of years Armenia was Armenia." – William Saroyan

Haig Basmadjian, "Arshavir Shiragian" chapter



**AYF Canada Youth Corps
Camp Vanadzor**

APPLY TODAY!

Send us an email or give us a call for more information, to make a donation, or to request an application:
youthcorps@ayfcanada.org
647-966-2281





ՀՈԿԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔ. ԶԱՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ
ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ՎԵՐԱԿԵՐՊՈՆԱՅԻՐ

Երիտասարդական 10-րդ Համախմբում

9-10 ՅՈՒՆԻՍ 2018

IAWAH բանակավայր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԶԱՅՆԵԼ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ (514) 856-1200
ԼԱՒԱԼ (450) 688-6795
ԹՈՐՈՆՏՕ (647) 838-0097
ԳԵՄՊՐԻՃ (519) 623-6372
ՎԱՆԳՈՒՎԸՐ (614) 626-9627
ՄՈՆՏՐԵԱԼ (514) 331-5445 X202

ԿԱՍ ԱՅՑԵԼԵԼ՝ WWW.ARMEIANPRELACY.CA
ԺԱՄԿԵՏ՝ 20 ՄԱՅԻՍ 2018
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿ՝ \$80



Հովանավորությամբ
Գանատայի մօտ 33 արտակարգ եւ լիազոր դեսպան
Մեծայարգ. Պրն. Լեւոն Մարտիրոսեանի

Քեպեի Հայ Համայնքի Միացեալ Մարմինը
կը կազմակերպէ

Հայաստանի Հանրապետութեան
Եւ Մայիսեան Հերոսամարտերուն
Հարիւրամեակի Տօնակատարութիւն

օրուան պատգամաբեր՝

Դոկտ. Աշոտ Մելքոնեան

(Հայաստանի Գ.Ա.Ա.Ի Պատմութեան Ինստիտուտի Ցնօրէն)

